ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/4 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Ք. Երևան «26» դեկտեմբերի 2023թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«29» նոյեմբերի 2023թ. թիվ 869** և **«5» դեկտեմբերի 2023թ. թիվ 912** հրամաններով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Շիրակի մարզի Երազգավորս բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/4** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթցակարգ) հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Արմեն Դանիելյան՝ Հանձնաժողովի նախագահող
Արաքսյա Իսախանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

1.1 «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ կազմակերպության (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը՝ կից փաստաթղթերով, ենթակա են հետագա գնահատման:

2. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված.

Չափաբաժին 1

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Հայտի ապահովման առկայությունը (առկա է/առկա չէ)
1	Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ	1,849,321,948 /մեկ միլիարդ ութ հարյուր քառասունինը միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր քառասունութ/	369,864,390 /երեք հարյուր վաթսունինը միլիոն ութ հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր իննսուն/	2,219,186,338 /երկու միլիարդ երկու հարյուր տասնինը միլիոն հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր երեսունութ/	Առկա է

2.1 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը (Հավելված 2) համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝

3.1 Մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակցի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի կողմից, սակայն հայտին կից առկա չէ որևէ այլ փաստաթուղթ՝ տվյալների իսկությունը ստուգելու համար, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

3.2 համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված երաշխիքը Մասնակցի կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված երաշխիքի թողարկման իսկությունը:

4 Հանձնաժողովը որոշեց.

4.1 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.1-ին կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ Մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2018-2022թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

4.2 Սույն արձանագրության 3-րդ բաժնի 3.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկին՝ պարզելու Մասնակցի բանկային երաշխիքի իսկությունը:

5 *Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը*

Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 2024 թվականի հունվարի 10-ին, ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի

նախագահ՝

Արմեն Դանիելյան _____

անդամներ՝

Արաքսյա Իսախանյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Լուսինե Ղազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

քարտուղար՝

Ռոզա Դանիելյան _____